

ՄԵՐԻ ԻՆՉԵՐՆ ՈՒ ՅՈՅՍԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Հայտնի է, որ Կիլիկիայի հայոց կաթողիկոսի մահից հետո Կաթողիկոս է ընտրվել Ամերիկայի հայոց առաջնորդ՝ Գերաշնորհ։ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը։ Նորընտիր կաթողիկոսը նախքան՝ մեկնելը իր աթոռանիստ քաղաքը՝ Սփյուռքի հայության ծանոթացնում է իր ցանկությունների և գործունեության այն ծրագրի հետ, որ նախառենում է իրականացնել կաթողիկոսական դահլը բազմելուց հետո։ Նորընտիր կաթողիկոսի դրծունեության և ապագա անելիքների մասին վրում է ինքը։ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսը հետաքրքրական ու շահեկան մի հոդվածի մեջ, որ տպված է Կիլիկիայի կաթողիկոսական պաշտոնական ամսագիր «Հասկ»-ի (1944թ.) մեջ։

Հոդվածը, որի մերնադիրն է «Մեր իշխանը ու յոյսերը որպէս կաթողիկոս Մեծի Տաճի Կիլիկիայ», նույնությամբ տեղադրում ենք ամսագրիս ներկա համարում։

Ա.

«Սովորութիւն է դարձած, որ բարձր պաշտօնի կոչուած անձինք, իրենց գործունեութեան ծրագիրն են ներկայացնում ապագայի համար։ Թերևս մեղ համար վաղաժամ համարուի, որեւէ խօսք ասել այդ մասին, հայրապետական օծումն ստանալուց առաջ։ բայց թւում է մեղ ոչ անպատշաճ, այլ նոյն իսկ պարտաւորութիւն մեր իշխանը ու յոյսերը, գոնէ, որոց խնդիրների նկատմամբ, մատչելի դարձնել յատկապէս մեր Ամերիկայի հօտին, որ տյնքան սիրու-

մեր կերպով իւր նուէլներն է բերում Կիլիկիայ Աթոռին, կապելով մեր յորեւենական հանգչաների հետ։

«Մեր չերմ աղօթքն է, մեր հոգեկան աղերսն առ Աստուած, որ այս աշխարհաւեր պատերազմը շուտ վերջանայ, որ միլիոնաւոր երիտասարդ կեանքեր է հնձում, անսահման կորուստներ բերում մարդկութեան նիւթական, մշակոյթային և բարոյական տեսակէտնելով։ Խաղաղության զովարար զեղիսւը թող փչէ մարդկութեան այս ատգնապալից կեանքի վերայ եւ աղգերի փոխադարձ վսասհութեան եւ բարի զրացիութեան յարաբերութիւնը վերականգնուի նրանց մէջ Աստուծոյ կամքով և օրհնութեամբ։

«Իորանից յետոյ թրբեւ հայ եկեղեցու բարձրագոյն պաշտօնեաներից մէկը, մեր առաջին իշխան կը լինէր Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ծայրագոյն Պատրիարքի ընարութիւնը կատարուած տեսնել Խորհրդային իշխանութեան և Հայաստանի կառավարութեան բարեհաման եւ բարեհացակամուսմազրության տակ, ինչպես արտահարուել է երիցո։

«Մայր Աթոռի երկարատեւ թափուր մնալուց յետոյ, պատերազմի հետ կապուած պատճառներով, ցանկալի է, որ նոր գահակալի ընարութիւնը կատարուի ամենայն փառաւորութեամբ եւ շքով ոչ միայն Խորհրդային երկների, այլ եւ Սփյուռքի հայութեան եկեղեցական եւ աշխարհիկ պատշաճաւորների լիակատար մասնակցութեամբ։

«Իսկ մենք իրեն Կաթողիկոս Մեծի Տաճն Կիլիկիայի կը կամենայինք մեղ ենթա-

կայ եպիսկոպոսների հետ նոյնպէս ներկայ լինել ընտրութեան և առա դլաւորել նոր ընտիր Ամենայն Հայոց Հայրապետի, և կաթողիկոսի ձևնադրութեան և օծման սրբազն արարողութիւնը: Այդ կը լինէք պատմական արէէքով մի մեծ գէպք, եկեղեցական-համագլային նշանակութեամբ, շշտելով Հայաստանեաց եկեղեցու անքակտելի միութիւնը բոլոր բարձր Աթոռների սերա դործակցութեամբ:

Բ.

«Այս ընդհանուր, բայց սրտապին ցանկութեան կը կամենայինք կցել մեր թղթերն ու յոյսերը Կիլիկիոյ Աթոռի նկատմամբ: Կիլիկիոյ Աթոռը Մայր Աթոռի համեմատութեամբ շատ նորմացած էր, աղքատ, նոյն իոկ Կիլիկիայում եղած ժամանակի: Իոկ իրեն փախստական Անթիլիասում հաստատուելով յետոյ, առանց եկամուտների, կարտածների, գրամական հասոյթների: Աստուած օրէնք Տ. Սահակ, Բարդէն և Գետրոս կաթողիկոսների յիշատակը, որոնք կարող եղան կաղմակերպել քայլայուած և անկերպարան Աթոռը, առուն հաստատել, համեստ պայմանների մէջ դոյլթեան պահպանութեան հնարաւորութիւն ստեղծելով:»

«Բայց Կիլիկիոյ Աթոռը դեր ունի կատարելիք. նա գեր ունի կատարելիք ոչ միայն իւր չորս եղիսկապասութիւնների կամ առաջնորդութիւնների համար, որպիսիք Քէյրութի, Հալէպի և Դամակոսի վիճակներն են Սուրբոյ մէջ և Կիլլուսը, պատմական շատ յիշատակներով կապուած մեր Կիլիկիան շրջանի պատմութեան հետ, այլ եւ այդ սահմաններից գուրս:»

«Նախընթաց պատերազմից յետոյ զեր մեր խելքը գլուխներս չէ եկել. խոսքը, յատկապէ Սփիռոքի հայութեան մասին է: Ոչ միայն Ամերիկայում, այլև ամենուրեք եկեղեցականների պակասութեան մեծ տաղնապէ տիրուած. եկեղեցիներ ունինք, ուր սեպհական քահանաներ չկան, կամ մէկի փոխարէն երկուսի, երեքի կարիքը կայ:

Սակաւաթիւ են վարդապետներ զիտութեամբ օժտուած, քարոզութեան եւ մշակոյթին գործերի մէջ, դաստիարակութեան մէջ հարկաւոր չափով ներգործական դեր կատարելու: Մայր Աթոռու հնարաւորութիւն չունի այդ կողմից օգնութեան դարւ. Երուսաղէմը իւր յատուկ կոչումն ունի, և հակառակ իւր կարիքների, միաբաններից մի քանիսին զիջել է Ամերիկայում եւ այլուր հովուական պաշտօն կառուրելու: Կիլիկիոյ կաթողիկոսարանը հաղթիւ մի քանի միարաններ ունի, անկարոզ մինչեւ իոկ իւր թեմերն ու զպրոցները կառավարելու, առանց Երուսաղէմի օգնութեան:

«Այս ցաւերին զարման մի կարևոր չափով Կիլիկիոյ Աթոռից պիտի սպասնեք, ոչ միայն իւր միարանութեան թիւը ըստ արացնելով, այլ եւ Սփիռոքի այլ եկեղեցիներից քահանայական կարիքը լրացնելու: Բաւական չէ մի կերպ կատավարուելու գրութեամբ բաւականանալ, այլ պէտք է անցնել ստեղծագործող կեսների, կրօնական-եկեղեցական եւ մշակոյթային մարդիրի մէջ: Այսպիսով Կիլիկիոյ Աթոռի համար երկու պարտականութեան ընդարձակ դաշտ կայ բացուած, իրար չետ սերտ կապուած, նապատակներով եւ տարողութեամբ: Առաջին՝ պէտք է պատրաստել բաւական թուով միարաններ, որոնցից զիտութեամբ, քարոզութեամբ և մշակոյթային գործերով զբաղուող վարդապետներ և եպիսկոպոսներ ունենանք: Երկորորդ՝ քահանայացներ և ուսուցիչներ պատրաստել մեր վիճակների և Սփիռոքի այլ զաղութեների համար: Իրբեւ Ամերիկայի Առաջնորդ տեսնում ենք, թէ ինչ վիճակ է ստեղծուած այստեղ. մեղ ենթակայ թեմերի մէջ 18 եկեղեցի ունինք եւ ընդամենը 12 հովիւ. փակւում են մեր զպրոցները, որովհեան ուսուցիչներ չունչինք, մատաղ ուերունդը շատ թոյլ կրօնական դաստիարակութիւն է ստանում, որովհեան կիրակնօրեայ զպրոցները քահանայ կամ աշխարհիկ ուսուցիչներ չունին: Բայց այս վիճակն ու կարիքը հասարակաց է մեր

Սփիւռքի, դրեթէ, բոլոր դաշութների
համար:

9.

«Միաբանութեան պատրաստութեան
հետ անհրաժեշտ է, որ կիլիկոյ Կաթու-
ղիկոսարանն ունենայ իւր Տպարանը շարող
եւ արագատիպ մեջնաներով, որպէսզի մեր
նիշար եւ ազաղոն Համակարգութ ոչ միայն
ատոքանայ և դատնայ ուժեղ բերան և գոր-
ծիք կաթուղիկոսարանի քարոզչութեան և
լուսաւորութեան, այլև իւր միաբանների և
դրսեցների գրական բանասիրական գործե-
րը ապաղըել կարողանայ: Մեր իղձն է, որ
կիլիկոյ Կաթուղիկոսարանը եկեղեցական-
վարչական կեդրոն լինելուց զատ, դառնայ
եւ մշակոյթային կեդրոն, երուսաղէմի
հետ ճեռք ճեռքի տուած, իբրեւ Հայաս-
տանիայց Եկեղեցւոյ երկու հաւատարիմ
ամոններ: Այս մտքերին կցւում է, բնակա-
նարար, գիտական պահանջների համեմատ
մատենալարան ունենալու խնդիրը. ա-
ռանց զէնքի զինուոր չկայ, առանց գրքի և
մատենալարանի գիտական աշխատաւոր:
Կաթուղիկոսարանի մատենալարանն առայ-
ժը իւղձ սկզբնաւորութիւն է միայն, որ
պէտք է հետդեմէ ընդարձակուի և զար-
գանայ: Բայց ինչպէս լաւ Հովիւններ, քա-
րոզիչներ և վարդապետներ պատրաստելու
խնդիրը մեր անհրաժեշտ կարիքներն են,
այսպէս էլ խմբապետներ պատրաստելու
դործը: Խմբապետութիւնը երաժշտական
արուեստի գործնական մասն է. այդ եւս
պէտք է մեր ուշագրութեան առարկան լի-
նի. երդ եւ քարոզ, դրանց հետ կապուած
կանոնաւոր արարողութիւն և ժամանացու-
թիւն կրօնական դաստիարակութեան և Հո-
գիններն աղնուացնող մասերն են՝ իրար
լրացնող:

«Մշակոյթային այս իղձների և յոյսերի
հետ կը կամենայինք կապել եւ մի ուրիշը:
Նախընթաց պատրաստմը ոչ միայն մի մի-
տինի չափ մարդկանց զոհ տարաւ մեզնից,
այլ եւ կենդանի մնացածներն էլ հողմա-
ցրիւ արաւ զանազան երկրներ, արմատա-

խիլ անելով Հայ աւանդութիւնը, բարբառը;
բանահիւսութիւնը, երդը... իւր աճեցո-
գութեան բնական հողից, մեր աղդագրա-
կան մշակոյթի գանձերը, սրոնք հիմքն են
եւ աղքիւրը աղդային արուեստի և գրա-
կանութեան և լեզուի զարգացման: Հայաս-
տանի կատավարութիւնը սկսել է հետա-
մուտ լինել նրանց հաւաքման եւ հրատա-
րակութեան: Բայց Սփիւռքի հայութեան
մէջ ևս դեռ կան ուշագրութեան արժանի
մնացորդներ, մանաւանդ արեւլքի գա-
ղութների մէջ: Մեր իղձն է ունենալ մի
լաւ ճայնահաւաք մեթենայ հազարաւոր
սկաւառակներով, որպէսզի այդ ուղղու-
թեամբ հարկաւոր աշխատանքն սկսուի,
հաւաքելով մեր հին շարականներն ու մե-
ղեդինները, ժողովրդական երգերը, բանա-
հիւսութեան մնացորդները որպէս ատաղձ,
որ ապագայի Կոմիտասը կամ Աճառեանը
օդապարդել և մշակել կարողանան Հայ
արուեստի և գիտութեան համար: Ասու թէ
ոչ, եւս մի քանի տասնեակ տարիներ, իս-
պատ կանհետանան նրանք եւ կը կորչին
յաւիտեան:

Դ.

«Շատերին, գուցէ, երազ կը թուայ
այս ամենը: Ամենայն միտք, յղացում ու
ծրագիր միշտ երազ է, եթէ հետամդուտ
չլինենք նրանց իրադրժման: Անհնարին
բան չէ մի քանի տարի ինամքով կատար-
ուած աշխատանքից յետոյ տնկած ծառը
մեծացնել եւ պտուղ սպասել: Անհնարին
չէ նաեւ, որոշ տարիների կարգաւորեալ
աշխատանքից յետոյ պատահներից հայրե-
նասէր եւ եկեղեցաւոչը քահանաները, ուսու-
ցիչներ եւ վարդապետներ պատրաստել:

Ո՞րաեղ պիտի պատրաստուին նրանք:
Կը պատրաստանենք մեր կաթուղիկոսարա-
նի Դավթեվանքի մէջ, որ նիւթականի պա-
կասութեան պատճառով այժմ միայն երկու
գասարան ունի. անհրաժեշտ է առնուազն
չորսն ունենալ, թրար հետեւոյ: Ի հարկէ
այստեղ չեն մտնիլ այբբենը նոր հեղող
մանուկներ, այլ ժողովրդական դպրոցն պ-

ւարտած պատանիներ, ընտրուած մեր կամ Սփիռոքի այլ վիճակների դպրոցաւարտներից : Այդպիսիների համար ընդհանուր կըրթութեան հետ չորս տարին բաւարար է նրանց մարդկել ազգային և եկեղեցական պատմութեան, ազգային և եկեղեցական մատենապրութեան, գրաբար և աշխարհաբար լեզուների ծանոթութեան մէջ : Ընդունակներին կարելի կը լինի յետոյ ուղարկել եւրոպական և ամերիկեան համալսարաններ մասնագէտներ դառնալու, նոյն

իսկ ապաղայում Դպրելանքի մէջ դասախոսելու համար : Գետք է բարձրանայ դըպրոցի մակարդակը, անհրաժեշտ թուով դասախոսներ դրաւելով կամ պատրաստելով, իսկ այս բոլորի համար դրամ է հարկաւոր, որպէսզի լաւագոյն կերպով գործադրելով, մարդ ստանանք :

«Ահա ինչու մեր յորելեանական տօնակատարութեանց համաձայնել ենք, որ մեր սիրելի ժողովուրդը նուէրներ ևս տայ կիլկեան Աթոռին և նորա Դպրելանքին» :

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

